ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԱԾ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐՈՒՄ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության շրջաններում մշտական բնակություն հաստատած փախստականների ֆինանսական վիճակը, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը *որոշում է*.

Հայաստանի Հանրապետության շրջաններում մշտական բնակություն հաստատած փախստականների համար, ովքեր ցանկություն են հայտնում կազմակերպել գյուղացիական կամ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն, սահմանել հետևյալ արտոնությունները՝

ա) եկամտահարկը սահմանել սկսած սեփականաշնորհման 4-րդ տարվանից.

բ) թույլատրել սեփականաշնորհված հողի մասնակի և անասնագլխաքանակի լրիվ արժեք վճարել հինգ տարվա ընթացքում՝ սկսած սեփականաշնորհման երկրորդ տարվանից:

Հայաստանի Հանրապետության Գերագույն
խորհրդի նախագահ **Լ. Տեր-Պետրոսյան**

Հայաստանի Հանրապետության Գերագույն
խորհրդի քարտուղար **Ա. Սահակյան**

29 հուլիսի 1991 թվականի,
քաղ. Երևան
N Ն-0366-I